

ԼՂԻՄ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՀԱՅ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ*¹

Հովիկ Ավանեսով

Բանալի բառեր՝ ռազմագործողություն, Արցախ, ազգային-ազատագրական պայքար, ռազմական շինարարություն, Ստեփանակերտի Մանկավարժական հիմնադրություն, կամավորական ջոկատ, Քարվաճար (Քելբաջար), Օմարի լեռնանցք, ինքնապաշտպանություն, անվտանգություն, ԼՂԻՄ:

Աղրբեջանի մի շարք քաղաքներում կազմակերպված հայ բնակչության ջարդերից ու տեղահանություններից, ԼՂ բնակավայրերի վրա ավագակային հարձակումներից հետո ինքնապաշտպանության նպատակով սկսեցին կազմավորվել զինված ջոկատներ ու մարտական շարժունակ խմբեր: Այդ գործընթացը տարերայնորեն սկիզբ առավ նախ սահմանամերձ կամ ադրբեջանական գյուղերի հետ սահմանակից բնակավայրերում[1]: Որսորդական հրացաններով ու ինքնաշեն գենքերով զինված խանդավառ ու նախաձեռնող մարդիկ, համախմբվելով, կամավոր ստանձնում էին գյուղի պաշտպանությունը, այդ իսկ նպատակով տանելով գիշերային հերթապահություն, հսկում հանրային ունեցվածքը, ապահովում բերքահավաքի, գյուղատնտեսական մյուս աշխատանքների, ճանապարհների ու ջրամբարների անվտանգությունը, մանավանդ եթե դրանք դուրս էին մնում ԽՍՀՄ ՆԳՆ պահակախմբերի ուշադրությունից: Ինքնապաշտպանական ջոկատների ծևավորման նախնական փուլում որպես կանոն միավորվում էին ազգակցական, ընկերական, դրացիական ու վատահություն ներշնչող այլ կապերով մերժեցած մարդիկ: Դա թելադրված էր ընդհատակում գործելու, գաղտնիության պահպանան և ՆԳՆ ներքին գործերի հետապնդումներից խոյս տալու անհրաժեշտությունից[2]:

Ըստ նշանակության ու լուծելիք խնդիրների Ս. Հարությունյանն առանձնացնում է ինքնապաշտպանական ջոկատների մի քանի տեսակ.

• ա. Սահմանամերձ ու վտանգված բնակավայրերի բնակչներից կազմված տեղային խմբեր, որոնք խնդիր ունեն պաշտպանելու իրենց տունն ու ըմտանիքը, ժողովրդատնտեսական կարևոր օբյեկտները, հանրային ունեցվածքը, ապահովելու գյուղատնտեսական աշխատանքների ու անասնահոտերի պահպանության անվտանգությունը: Այս կարգի խմբերը, մեժամասամբ, մարտական չեն, նրանց անդամները միայն դեպքից դեպք էին իրենց դերի մեջ մտնում՝ ավելի շատ գրադարձով արօյա հոգսերով ու խաղաղ-ստեղծագործ աշխատանքով:

• բ. Հիմնականում քաղաքարնակներից ստեղծվում էին այնպիսի զինված խմբեր ու ջոկատներ, որոնք կամ օգնության էին հասնում վտանգված բնակավայրերի պաշտպաններին, կամ էլ կատարում էին զանազան մարտական առաջարկանքներ:

* Հոդվածն ընդունվել է 18.01.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել գիտական դեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Ս.Հարությունյանը:

¹Հետոգութությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՆ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ NGS 14.10-002 գիտական թեմայի շոշանակներում:

ՄԵՄՐՈԴ ՄԱՆՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

- գ. Կային նաև հասուկ պատրաստություն անցած կամ զինվորական համապատասխան փորձ ունեցող և տարբեր վայրերից ժամանած հայ կամավորականների մարտունակ ջոկատներ, որոնք, ըստ անհրաժշտության, գործում էին առավել վտանգված շրջաններում, հատկապես՝ Հյուսիսային Արցախում, Հաղորդի ծայրամասային, Շուշի շրջանի հայկական գյուղերում և այլուր: Ի դեպ, ինչքան մեծ էր վտանգը և հաճախակի՝ հակառակորդի հարձակումները, այնքան կազմակերպված ու մարտունակ էր տվյալ վայրի ինքնապատճենական ջոկատը[3]:

Ինչպես իրավացիորեն եզրակացրել է Ս. Հարությունյանը, նախկին ԽՍՀՄ ղեկավար մարմինների թողովությամբ, Աղրբեջանական ԽՍՀ կողմից իրականացվող բռնությունների, կողոպուտի ու տեղահանությունների քաղաքականությունը խորհրդային ներքին գործերի ու աղրբեջանական ՍՀՆՁ-ի կամայականությունները ԼՂ-ում, տնտեսական շրջակակումը և նախապատրաստվող ազրեսիայի ահազնացող վտանգը արցախահայությանը կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու, ապա և ինքնապաշտպանության ուժեր ստեղծելու անհրաժշտության առաջ: Սակայն զինված կազմավորումներ ունենալու համար անհրաժշտ էին զենք, զինամթերք, համապատասխան նյութատեխնիկական հիմք, հարկ էր լուծել մի շարք կազմակերպչական նախապատրաստական խնդիրներ, ինչը խորհրդային գործերի ու աղրբեջանական ՍՀՆՁ-ի համապարփակ օղակման և դաժան վերահսկողության պայմաններում տեսականորեն անհնար էր: Այնուամենայմիվ, հայ ժողովրդի լավագույն զավակների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ խոր ընդհատակում ծերնարկել զենքի ու զինամթերքի հայրայթումը, կամավորական ջոկատների ստեղծումը և ինքնապաշտպանության գործի կազմակերպումն ու դեկավարումը: Ավետարանի վրա 1988թ. փետրվարի 22-ին Ալ-Նայից (Աղրբեջանական հորջորջմամբ՝ Աղդամ) իրականացված հարձակումից, ինչպես նաև Իվանյանի (Խոջալու) և Կրկժանի 1988թ. սեպտեմբերի 18-ի, ընդհարումներից ու Շուշիի հայության տեղահանությունից հետո, երբ վտանգն անմիջականորեն սպառնում էր մարզկենտրոնին, այստեղ ևս սկսեցին կազմավորել զինված ջոկատներ: Ինքնապաշտպանության գործի, ժողովրդի մարտունակ մասի զինման և արագ հակագործման ջոկատների ստեղծումը հիմնականում իրականացնում էին ընդհատակյա կազմակերպությունները:

Աղրբեջանական ավագակախմբերն արդեն արժանի հակահարված էին ստանում: Աղրբեջանի պետական մեքենան, որ ձգուում էր հայարավելու նաև ԼՂ ինքնավար մարզը, սարսափեց կազմակերպվող ժողովրդից և Կրեմյի միջոցով ավելի սաստկացրեց խաղաղ բնակչության ահաբեկումները, հալածանքներն ու հետապնդումները: Ապահովեց նաև կենտրոնական իշխանությունների անվերապահ աջակցությունը, ինչն իր արտահայտությունը գտավ ԽՍՀՄ ղեկավար Ս. Գորբաչովի 1990թ. հուլիսի 25-ի հրամանագրում, որով ԽՍՀՄ ՆԳՆ իրավունք էր վերապահվում օրենսդրությամբ չնախատեսված սպառագեն կազմավորումները ցրելու, առկա զենքն ու զինամթերքն առգրավելու համար օգտագործել ներքին գործեր, իսկ առանձին գործողություններում թույլատրվում էր նաև ԽՍՀՄ պաշտպանության նախարարության ստորաբաժնումների մասնակցությունը: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այդ հրամանագիրը կիրառվեց իր օջախն ու տունը պաշտպանող հայ բնակչության նկատմամբ: Բնականաբար, Աղրբեջանական ԽՍՀ իրավատրյան տակ գտնվող տարածքներում «օրենսդրությամբ նախատեսված» հայկական զինված կազմավորումներ ստեղծելն այլևս անհնար էր, իսկ ժողովրդի ինքնապաշտպանության փորձերն օրենքից դուրս էին դիտարկվում:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Այդուհանդերձ, գաղտնի գործող փոքրաթիվ կամավորականները, ոգևորված ֆիդայական շարժման զաղափարներով, բազմաթիվ մանր ու մեծ ընդհարումներում սխրագործությունների ու անծնվիրության հրաշալի օրինակներ էին տալիս[4]: 1991թ. մայիս և հունիս ամիսներին աղորեցանական հասուուկ նշանակության (ՕՍՕՆ) զինված ջոկատները, խորհրդային գործերի օժանդակությամբ հրականացրին «Օղակ» ռազմագործողությունը: Մարտական ուղղաթիռների, հրասայլերի և գրահամերեմանների ուղեկցությամբ «անծնագրային ռեժիմի ստուգման» ու «հայ գրոհայիններին զինաթափելու» պատրվակով ներխուժեցին Գետաշենի ենթաշրջան և Շահումյանի շրջանի գյուղերը: Հատկապես թեժ մարտեր բորբոքվեցին Խանջարի շրջանի Գետաշեն և Մարտունաշեն գյուղերի տարածքում: Սակայն ուժերն անհավասար էին: Վերոնշյալ բնակավայրերը, ինչպես նաև 24 այլ հյական գյուղերը բռնի հայաթափելուց հետո, Արցախում ու Հայաստանի սահմանամերձ նյութ բնակավայրերում հրավիճակը կտրուկ բարդացավ[5]: Ստեղծված հրավիճակը ցույց տվեց, որ ինքնապաշտպանության գործն ինքնահոսի մատնելը կարող է ճակատագրական լինել: Խանդավառությունը, նախաձեռնողականությունը, նվիրումը բավարար չէին ժողովրդի պաշտպանության գործը հիմնավորապես կազմակերպելու համար: Պետական, համազգային վերաբերնունք ու ջանքեր էին անհրաժեշտ[6]: Այս առումով կարող քայլ էր 1991թ. մայիսի 4-ին Պաշտպանության կոմիտեի ստեղծումը, որն իբրև համակարգող, կազմակերպող ու ղեկավարող համազգային մարմին, անմիջապես ձեռնամուխ եղավ ինքնապաշտպանության ոլորտում ծառացած բազմաթիվ ու տարաբնույթ, համախ բարդ խնդիրների լուծմանը: Կոմիտեի առաջնահերթ խնդիրներից էին նաև Շահումյանի շրջանի պաշտպանության կազմակերպման, այնտեղ Շահեն Սեղրյանի ընդհանուր հրամանատարությամբ գործող կամավորական ջոկատների ղեկավարման աշխատանքերին օժանդակը, ինչպես նաև Վտանգված սահմանային շրջանների անվտանգության ապահովումը[7]:

1991-ի սկզբից Աղորեցանը սեփական բանակ էր կազմավորում, անարգել բռնագավթում էր իր տարածքում տեղակայած խորհրդային գորամասերի գենքն ու զինամքերը: Տարվա ընթացքում միութենական լրատվամիջոցները բազմաթիվ հաղորդումներով անդրադարձան Գանձակի ու Քյուրդամիրի, Բաքվի և Ալաշերոնի ռուսական զորանոցների ու նրանց պահեստների կողոպուտներին: Ամեն ինչից հստակ երևում էր, որ հարևան հանրապետությունում եռանդագին նախապատրաստվում են պատերազմի, որը համարվում է «ինքնապաշտպանական», իսկ հրականում կրելու էր նվաճողական ու բռնազավթողական բնույթ, քանի որ այն լինելու էր մարգի դեմ, որը առանց որևէ կրակոցի, նույնիսկ մի անպարկեշտ խոսքի, աշխարհին հայտարարել էր ինքնորոշման իր կամքը և ուզում էր ապրել իր ցանկացած ձևով՝ մարդկային, սեփական ազգային ձևակերպով: Անշուշտ, աղորեցանական բանակի ստեղծումը և նախապես նրա ահրելի գինապարության ապահովումը մեկ անթաքույց նպատակ ունեին հակահայկականության գորաշարժը[8]:

Դեռևս 1991-ի գոյության վերջին տարիներին Արցախում կազմավորվել էին ուսանողական ջոկատներ:

1988թ. գարնամը ձեռնարկվեցին ուսանողությանը կազմակերպելու և ջանքերը համախմբելու քայլեր: Դրա համար անհարժեշտ էին միավորող զաղափար և ժոագրված ու նպատակառողկած գործելակերպ, որը կանոնակարգված պիտի լիներ կանոնադրությամբ: Այդ խնդիրը լուծելու համար հիմնադրվեց Հայոց ընկերավարական արցախական կուսակցությունը (ՀԸԱԿ), որն առաջադրել էր ռազմաքաղաքական խնդիրներ: Ակտիվիստ ուսանողները 1988-ի մարտ ամսում երդվեցին ՀԸԱԿ-ի ծրագրի, կանոնադրության, գենքի և եռագույն դրոշի վրա: Դա, փաստորեն, դարձավ նրանց գինապատրական ու

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Կուսակցական երդումը: Կուսակցության շարքերն ընդլայնելու նպատակով գաղափարական աշխատանք ծավալվեց ուսանողության շրջանում: Ուսանող-ակտիվիստները գործում էին շատ զգույշ՝ ՊԱԿ-ի լրտեսներից գաղտնի մնալու և պատահական մարդկանցից գերծ մնալու նպատակով: Իսկ ըստորությունը կատարվում էր խիստ չափանիշներով: Մի քանի ամիս անց արդեն ԿՄԻ Ստեփանակերտի բաժնանմունքում զգալի էր ընդհատակյա կազմակերպության աշխատանքը: ՀՀԱԿ-ի հետքերը թարցնելու նպատակով որոշվում է ստեղծել երիտասարդական կազմակերպություն, որը կոչված էր նոր անդամներով համալրելու կուսակցությունը և փոխարինելու արդեն իսկ հեղինակագրկամատերի կոմերիտությանը: Այդպես ստեղծվում է Արցախյան ուսանողական միությունը (ԱՌԵՄ): Ակտիվիստներից Ակիհ Սարգսյանի վկայությամբ մինչև 1989թ. աշունը ծևավորվել էր նաև ուսանողական ջոկատը, որը դեռ գործողություններ չէր սկսել:

Ուսանողական ջոկատի գործունեության սկիզբ կարելի է համարել 1989թ. աշունը, երբ, կապ հաստատելով Բերդածորի ինքնապաշտպանության խորհրդի (ԲԻԽ) հետ, 10-15 մարտուց կազմական առանձին խմբերով, շինօրկատի անվան տակ, ուսանողները 10-20 օրով մեկնում էին Բերդածոր ու գինված հերթապահություն իրականացնում ենթաշրջանի 4 գյուղերում: Այն ժամանակ մշտական հրամանատար չկար, այլ ընտրվում էր առաջադրանքը կատարելուց առաջ, հենց առաջադրանքը կատարելու վայրում: Ընդհանուր հրամանատարը Արկադի Կարապետյանն էր, որի հետ համաձայնեցվում էր ամեն մի գործողություն, իսկ որոշում կայացնելիս հաշվի էր առնվում բոլոր մասնակիցների կարծիքը: Գաղափարական գործողություններից բացի ուսանողները գրադպուտ էին նաև պարտիզանական գործողություններով, ավելի հաճախ գենքի ու գինամթերքի հայրայթումով և տեղափոխումով, ինչպես նաև կատարում էին դիվերսիոն գործողություններ սահմանաերծ բնակավայրերում, ույ նաև շփումների մեջ էին մտնում տեղի բնակիչների հետ՝ համախոհներ ու վստահելի մարդիկ գտնելու նպատակով[9]:

1990թ. օգոստոսի 11-ին ՀՀԱԿ-ի աջ թիկի հիմքի վրա Հ. Խաչատրյանի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայ ազգայնականության ճակատ (ՀԱՃ) ռազմաքաղաքական կազմակերպությունը, որի գաղափարախոսության հիմքը Գարեգին Նժենիի «Ցեղակրոն» ուսմունքի հիմնադրույթներն են: Կազմակերպության մեջ ընդգրկվել են մեծ թվով ուսանողներ, որոնք գաղափարական աշխատանքներից բացի (1990-91թթ. հրատարակել են «Ավետյաց Երկիր» թերթը)[10]: 1990-93-ին ջոկատը մասնակցել է Մարտունիի (Պարադալու), Ասկերանի (Փարուխ, Ղահրավ, Սարնաղբյուր), Շուշիի Բերդածորի ենթաշրջանի, Մարտուակերտի (Տոնաշեն, Թալիշ, «Պուշկենյալ» և հեռուստաաշտարակի բարձունքներ, Դրմբոն, Առաջաձոր) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1993-ի մարտի 13-ին ջոկատը լուծարվել է, ազատամարտիկներն ընդգրկվել են ԼՂՀ ԻՊՈւ տարբեր ստորաբաժանումներում: Տարբեր ռազմական գործողությունների ժամանակ հրամանատարներ են Եղել Ս. Բաղրյանը, Շ. Խաչատրյանը և Ա. Արքահամյանը[11]:

Այսպիսով՝ Արցախի մայր բուին իր մասնակցությունն է ունեցել մեր հանրապետության պաշտպանության ու կայացնան գործում: Ուսանողներն ու դասախոսներն աչքի են ընկել բոլոր ուղղություններում մնված մարտական գործողություններում, զինվորական կառույցներ ու ստորաբաժանումներ ստեղծելու և դեկավարլու գործում: Ուսանողներ են Բարսեղյանի[12], Լ. Կարապետյանի, Ի. Հասրաթյանի [13] և այլոց անձներ օրինակն ու խիզախումները ոգեշնչման աղբյուր էին բազմաթիվ ազատամարտիկների համար, ովքեր ստորաբաժանումներում կատարում էին պատահական մարդկան հաջողիկ հաջորդություններից շատ զգույշ կատարելու վերականությամբ: Ուսանողներն առանձնահաստուկ հակում ցուցաբերեցին դեպի ռազմական գործը, ինչի շնորհիկ նրանց հաջողվեց կարծ ժամա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նակամիջոցում ձեռք բերել ռազմական փայլուն գիտելիքներ, դրանք ռազմադաշտում հմտորեն կիրառելու և մարտական տեխնիկային տիրապետելու ունակություններ, ինչպես նաև տարրեր ստորաբաժնումներ ղեկավարելու փորձ ու արհեստավարժություն: Պատահական չէ, որ նրանցից շատերը, այդ թվում և հետմահու, արժանացել են կարավարական պարզների ու մարտական շքանշանների, իսկ մյուսները պետական կարավարման համակարգում զբաղեցնում են պատասխանատու պաշտոններ[14]:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ առանձին ջոկատների, դրանց օրինակով Արցախում ինքնապաշտպանության գործի կազմակերպման մասին ավելի ամբողջական պատկերացում տպականացնելու համար:

Ասկերանի ինքնապաշտպանական ջոկատները

Ինքնապաշտպանական ջոկատ ստեղծելու անհրաժեշտությունն Ասկերանում գգացվեց 1988թ. փետրվարի 22-ին Ակնայից (Աղդամ) իրականացված հարձակություն անմիջապես հետո: Ծրջանում Շարժման ակտիվիստ Սլավիկ Առուշանյանց նման հանձնարարություն ստացած այն կամավորականները, ովքեր փակել էին բազմահագարանոց ամբողյի առաջխաղացման ճանապարհը:

Ասկերանում առաջին ջոկատների ստեղծման աշխատանքներով գրաղվել է Նախաձեռնող խումբը՝ հավաքագրելով ծանոթ-բարեկամներին, հարևաններին:

1988թ. մայիսին Ասկերանի նախաձեռնող խմբում, կապված սահմանամերձ բնակավայրերում լարվածության մեծացման և կազմակերպչական աշխատանքների ծավալների աճի հետ, առանձնացվեց պաշտպանության գծով ստեղակալ Մարտին Հակոբյանը, որը կարողացավ կարծ ժամկետում զգալի գործ կատարել ջոկատների ստեղծման, նրանց նյութատեխնիկական բազայի ամրապնդման և գործողությունների համակարգման ուղղությամբ: Իսկ նախաձեռնող խմբի մյուս անդամ Սլավիկ Միհրզյանն ըստնրվեց Մարտարդյուրի կողտնտեսության նախագահ և անմիջապես ծերնամուխ եղավ այստեղ և ջոկատ հավաքագրելու գործին:

Որպես կանոն՝ Ասկերանում ջոկատ էին ընդունվում որսորդներ, այսինքն՝ նրանք, ովքեր հրացան ունեին: Աշոտ Հարությունյանին, Վանյա Սարգսյանին, Ավետ Ղանելյանին, Վուկա Աղաջանյանին և այլոց համախմբեց Մարտին Աղաջանյանը, և, հարկ եղած դեպքում, հերթապահություն էին տանում վտանգված սահմանամերձ բնակավայրերում:

Սումգայիթյան ցեղասպանությունից հետո գիշերային հերթապահություն է սահմանվել նաև Ասկերանում: Բնակչությունը հավաքագրվել է 4 հարյուրյակ: Այս խմբերի գործունեությունը և հերթապահության կրումը մի յուրօրինակ դպրոց է հանդիսացել փորձ ձեռքբերելու և ապագա մարտիկներ ընտրելու համար: 1989թ. Ասկերանում գործում էր 3 ինքնապաշտպանական ջոկատ՝ Յուրի Աղաջանյանի (Ուկա), Վիտալի Բալյասյանի և Մանվել Ղանիելյանի հրամանատարությամբ: Բացի այդ՝ պահեստազորում կար նաև աշխարհազորային ջոկատ: Ինքնապաշտպանական կազմավորումներին ակտիվ մասնակցություն են ունեցել Արամ, Սամվել և Շահրաման Աղաջանյանները, Պավել Ապրեսյանը, Կարեն Ավանեսյանը, Արտուր Արզումանյանը, Վոլոյյա Սարգսյանը, Արամ Տերզիկյանը և ուրշներ[15]:

Ասկերանի ջոկատները առանձին և ՊՃ ստորաբաժնումների կազմում մասնակցել են Ասկերանի, Մարտունիի, Մարտուկերտի, Շուշիի, Որոտանի (Կուբաթլու) և այլ շրջանների ինքնապաշտպանական և զարարական մարտերին[16]:

Ասկերանոցի (Զանախչի) կամավորական ջոկատը (ԼՂՀ Ասկերանի շրջան)

1990-ին Ասկերանոցում կազմավորվել է կամավորական ջոկատ (հրամանատար՝ < Ստեփանյան), որի հիմքի վրա 1991-ի վերջին ստեղծվել է վաշտ: 1992-ից ջո-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կատը առանձին, ապա որպես վաշտ՝ Ասկերանի պաշտպանական շրջանի առանձին մոտոհրածգային գումարտակի (հրամանատար՝ Ա. Ղարամյան) կազմում մասնակցել էն Քերքածորի (Հասանաբաղ), Լեսոնյի, Քարինտակի, Մալիթեկուի, Ծուշի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Արցախի Հանրապետության «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Հ. Ստեփանյանը, Ա. Համբարձումյանը, հետմահու՝ Ա. Հայրապետյանը, Մ. Հովսեփյանը, Կ. Գաղյանը[17]:

Քերքածորի ընդհատակյա կամավորական ջոկատ (ԼՂՀ Ասկերանի շրջան)

Քերքածորում 1989-ին կազմավորվել է ընդհատակյա կամավորական ջոկատ (հրամանատար՝ Յու. Զահանգիրյան), որը 1989-ի նոյեմբերին գուղն ազատել է աղոթքանցիներից և վերաբնակեցրել փախստականներով: 1992 թ. ջոկատը կազմակերպել է Քերքածորի ինքնապաշտպանությունը, իսկ նրա առանձին ազատամարտիկներ ՊԲ ստորաբաժանումների կազմում մասնակցել են տարբեր շրջանների ազատագրական մարտերին[18]:

Դաշուշենի ինքնապաշտպանական խումբ (ԼՂՀ Ասկերանի շրջան)

1988-ին Դաշուշենում կազմավորվել է ինքնապաշտպանական խումբ, միավորվել այսուել տեղակայված ՀՀ Շյուրեղավանի ջոկատի հետ (հրամանատար՝ Ս. Վարդանյան): Ջոկատը առանձին, ապա Ասկերանի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել է Ասկերանի, Շահումյանի և այլ շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին[19]:

Խնարադի(Խնապատ) կամավորական ջոկատները (ԼՂՀ Ասկերանի շրջան)

1988-ին Խնապատում կազմավորվել են կամավորական ջոկատներ, որոնց հիմքի վրա 1990-ին ստեղծվել է վաշտ: 1992-ի հունիսի 12-ին, սեպտեմբերի 19-ին և հոկտեմբերի 2-ին հակառակորդ հարձակվել է Խնապատի վրա: Թշնամու երեք հարձակումներն էլ խանաբարդցիները հետ են մղել: 1992-94-ին Խնապատի ազատամարտիկները Ասկերանի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել են Ասկերանի Ակնայի (Աղդամ) և ԼՂՀ այլ շրջանների ազատագրական մարտերին: Ուզագմական տարբեր գործողությունների ժամանակ Խնարադից հրամանատարներ են եղել Ա. Հայրապետյանը, Ս. Շատրյանը (հետմահու արժանացել են ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի), Գ. Մանգասարյանը, Ա. Պետրոսյանը (հետմահու արժանացել են ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի), Ա. Պետրոսյանը, Ս. Շահրամանյանը, Ս. Արգումանյանը, Ա. Գաբրիելյանը[20]:

Խնձրիստանի «Կորրա» կամավորական ջոկատը (ԼՂՀ Ասկերանի շրջան)

Խնձրիստանի կամավորական ջոկատի մասին տեղեկություններ կամ նաև գուրգեն Աղասարյանի «Խնձրիստան գյուղի պատմությունը» աշխատության մեջ: Սակայն ուսումնակիրության մեջ չի հիշատակված ջոկատի կազմավորման տարեթիվն ու անվանումը[21]:

1990-ին Խնձրիստանում կազմավորվել է «Կորրա» կամավորական ջոկատը (հրամանատարներ՝ Վ. Աղասարյան, Ն. Ղույան): Ջոկատն առանձին, իսկ 1992-ի սեպտեմբերից՝ Ասկերանի պաշտպանական շրջանի 4-րդ հրաձգային գումարտակի կազմում մասնակցել է Ասկերանի (Նախիջևանիկ, Խնձրիստանի, Խանապատ, Աղդամ, Քարագլուխ), Ակնայի (Աղդամ), Մարտակերտի, Քարվաճարի (Քելբաջար) շրջանների ինքնապաշտպանական, ազատագրական մարտերին, հակառակորդի կրակակետերի ճնշման ռազմական գործողություններին: Խնձրիստանից հրամանատարներ են եղել Ս. Ավանեսյանը (հետմահու արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի), Ռ. Ավանեսյանը, Ա. Բեղլարյանը, Ն. Ղույանը, Գ. Միրզոյանը, Ա. Պողոսյանը (բոլորը հետմահու արժանացել են ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՆՏՈՎ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

նի շքանշանի), Վ. Աղասարյանը (ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակակիր). Ա. Դանիելյանը. Գ. Մնացականյանը, Ս. Միրզոյանը (բոլորը արժանացել են ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի), Ա. Դույսնը (հետմահու «Արցախի հերոս», «Ուկե արծիվ» և ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշան-ների ասպետ)[22]:

Լուսաձորի կամավորական ջոկատը (ԼՂՀ Ասկերանի շրջան)

1989-ին Լուսաձորում կազմավորվել է կամավորական ջոկատ (հրամանատար-ներ՝ Ա. Խաչատրյան, Լ. Ավանեսյան): 1992-ին ջոկատն առանձին կամ Ասկերանի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել է գյուղի, Ասկե-րանի (Խնձրիստան, Բաղարա), Բերդորի (Լաշին) շրջանների, Ասկերան-Նախչևնահի ճակատային գծի հնքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ուզմական տարրեր գործողությունների ժամանակ Լուսաձորից հրամանատարներ են եղել Ժ. Զա-քարյանը, Լ. Ավանեսյանը[23]:

Դահրավի կամավորական ջոկատը (ԼՂՀ Ասկերանի շրջան)

Դահրավի կամավորական ջոկատը կազմավորվել է 1990թ.: Բայց մինչ այդ հա-յաստանաբնակ Ար. Միհրաբյանը մի խմբի հետ գտնվում էր Դահրավ գյուղում և զբաղվում էր գյուղի հնքնապաշտպանության գործով: 1990թ. ջոկատը եղիկ Խա-չատրյանի գլխավորությամբ սկզբնական շրջանում բաղկացած էր 4-5 հոգուց, հե-տագայում համալրվելով, մինչև 1992թ. կեսերը հասցեց 100-ի սահմանագիծը:

Բերդաշենի կամավորական ջոկատը (ԼՂՀ Մարտունու շրջան)

1988-ին Բերդաշենում կազմավորվել է կամավորական ջոկատ (հրամանատար՝ Ն. Սողոմոնյան), 1991-ին՝ կամավորական վաշտ (հրամանատար՝ Լ. Գևորգյան), 1992-ին՝ Բերդաշենի ծորակի միավորված ջոկատը (հրամանատար՝ Ն. Սողոմոնյան): Բերդաշենի և այլ ջոկատների հիմքի վրա 1992-ի սեպտեմբերին ստեղծվել է Մարտունիի պաշտպա-նական շրջանի առանձին մոտոհրածգային գումարտակը: Մասնակցել են Ավդալ-Գյու-լակիլու ուղղության, Մարտունի, Քարվաճարի (Քելքաջար), Հորադիզի և ԼՂՀ այլ շրջանների հնքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ուզմական տար-րեր գործողությունների ժամանակ Բերդաշենից հրամանատարներ են եղել Ն. Սողոմոն-յանը, Է. Գևորգյանը, Լ. Գևորգյանը, Ա. Զարգարյանը, Կ. Զարգարյանը, Յու. Հովսեփյանը, Գ. Խորակյանը, Բ. Արելյանը, Ա. Հարությունյանը, Կ. Պողոսյանը: ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Է. Գևորգյանը, Կ. Զարգարյանը, Յու. Հովսեփյանը, Կ. Աղաջանյանը, Կ. Առուստամյանը, Ա. Ավետիսյանը, Է. Աբրահամյանը[24]:

Գիշիի կամավորական ջոկատ (ԼՂՀ Մարտունիի շրջան)

1989-ին Գիշիում կազմավորվել է կամավորական ջոկատ (հրամանատար՝ Ս. Գասպարյան): Ջոկատն առաջին հնքնապաշտպանական մարտերը մղել է Գիշիի և Սուշկապատ գյուղի սահմանամերծ տարածքում, 1991-94-ին առանձին, ապա Մար-տունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել է ԼՂՀ - Մարտունիի (Ճարտար, Ավդուր, Նորշեն, Աշան) և այլ շրջանների հնքնապաշտպանա-կան և ազատագրական մարտերին:

Գիշիից հրամանատարներ են եղել Ս. Գասպարյանը, Վ. Իշխանյանը, Ս. Շամամ-յանը: ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Սեր-ժիկ Շամամյանը (Ետմահու), Լ. Քարայանը, Վ. Իշխանյանը, Կ. Իշխանյանը[25]:

Թաղավարի կամավորական ջոկատ (ԼՂՀ Մարտունիի շրջան)

Թաղավարի կամավորական ջոկատն ստեղծվել է 1991 թվականին: Հետագա-յում ջոկատը ներառվել է գյուղի գումարտակի կազմում: Թաղավարի ազատամար-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

տիկները ջոկատի, գումարտակի և ՊԲ ստորաբաժանումների կազմերում մասնակցել են Մարտակերտի, Մարտունիի, Վարանդայի (Ֆիզովի), Ակնայի (Աղդամ), Քարվաճառի (Քելքաջար), Որոտանի (Կուբաթու) շրջանների հնքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ուզմական տարրեր գործողությունների ժամանակ գյուղից հրամանատարներ են եղել Կ. Ավագերյանը, Բ. Ջիվանյանը, Ա. Բաղասյանը, Վ. Խաչատրյանը: ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարգևատրվել են Ը. Շահրամանյանը, Բ. Ջիվանյանը և Ս. Թամրագյանը[26]:

Սպիտակաշենի հնքնապաշտպանական խումբ (ԼՂՀ Մարտունի շրջան)

1988-ին Սպիտակաշենում կազմավորվել է հնքնապաշտպանական խումբ, որն առանձին, իսկ 1992-ի սեպտեմբերից Մարտունիի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել է Սպիտակաշենի, Մարտունիի և ԼՂՀ-ի այլ շրջանների հնքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ուզմական տարրեր գործողությունների ժամանակ հրամանատարներ են եղել Կ. Բալասանյանը [27], Ո. Բաղդասարյանը («Ուաֆո»), Վ. Բաղդասարյանը: Ս-ից ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով պարգևատրվել է Վ. Բաղդասարյանը, 2-րդ աստիճանով՝ Ս. Հայրիյանը, Վ. Հարությունյանը, իսկ հետմահու՝ Վ. Բալասանյանը [28]:

Հաթերքի կամավորական ջոկատ (ԼՂՀ Մարտակերտի շրջան)

1990-ին Հաթերքում կազմավորվել է կամավորական ջոկատ(հրամանատար՝ Ա. Հարությունյան): 1991-ի օգոստոսի 16-ին ջոկատը և գյուղի կանայք պատանդ են վերցրել ԽՍՀՄ ՆԳՆ գործերի 43 զինվորի և պահանջել ազատել Հաթերքի և Չափար գյուղերից պատանդ վերցված տասնյակ հայ երիտասարդների, որոնց ծերբակալել և աղբբեջանցիներին էր հանձնել ԽՍՀՄ ՆԳՆ գործերի հրամանատարությունը: Դեպքի կապակցությամբ և Զ. Բալայանի ահազանգով՝ օգոստոսի 18-ին Հաթերք են ժամանել «Կրիկ»-ի մի շարք անդամներ. նրանց միջնորդությամբ նույն օրը կատարվել է պատանդների փոխանակում:

1992-ի հունիսին Քարվաճառի (Քելքաջար) շրջանի Չարեքտար և Նարեշտար գյուղերի հենակենտերից «ՍՍ-21» կայանքներով հրթիռահրետակոծվել են Հաթերք և շրջակա գյուղերը, հունիսի 5-ին հակառակորդը գրավել ու հրկիցել տները, խոշտանգել երկու տասնյակից ավելի խաղաղ բնակիչների: ԼՂ ԻՊՈՒ-ի հրետանավորները և կամավորական ջոկատները կարողացել են կասեցնել հակառակորդի հետագա առաջխաղացումն այլ ուղղություններում և հնարավորություն են ստեղծել բնակիչների տարհանման համար: Հուլիսի 20-ին Հաթերքի ջոկատը հարձակվել է գյուղում տեղակայված հակառակորդի Վրա, նրան կորուստներ պատճառել, ապա նահանջել ու դիրքավորվել է Վաղուհաս-Չղորան ուղղությունում: 1993-ի փետրվարի 20-ին ԻՊՈՒ ազատագրել են Հաթերքը[29]:

1988-ին կազմավորված Ծաղկաշենի կամավորական ջոկատը (ԼՂՀ Մարտակերտի շրջան) (հրամանատար՝ Վ. Ավագինյան) 1992-ին ներառվել է Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում և մասնակցել Մարտակերտի, Ասկերանի, Քարվաճառի (Քելքաջար), (Օմարի լեռնանցք) և այլ շրջանների հնքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Ծաղկաշենը 1992-ի հուլիսի 4-ին բռնագաղթել է, ազատագրվել է 1993-ի հունիսի 27-ին: Ծաղկաշենից ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Վ. Խաչատրյանը, հետմահու՝ Ա. Մարգարյանը («Գավող») և Ա. Խաչատրյանը («Խաչո»)[30]:

Թթվողի աշխարհագորային-կամավորական ջոկատը (ԼՂՀ Մարտակերտի շրջան)

Կազմավորվել է 1989-ին: Առանձին կամ Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել է Մարտակերտի (Կիչան, Դագանչի,

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

«Պուշկեն յալ» բարձունք, Մաղավուզ, Մադաղիս, Չայլու և այլ) բնակավայրերի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Մարտական տարրեր գործողությունների ժամանակ հրամանատարներ են եղել Վ. Գրիգորյանը, Ս. Խորայելյանը, Վ. Խորայելյանը, Ս. Մկրտչյանը, Է. Բեգլարյանը, և Մարտիրոսյանը[31]:

Թալիշի կամավորական ջոկատներ (ԼՂՀ Մարտակերտի շրջան)

1988-93թ. Մարտակերտի շրջանի թալիշ գյուղում կազմավորվել են աշխարհագորային (հրամանատար՝ Ս. Խալավյան), 2 պարտիզանական (հրամանատարներ՝ Ս. Խոկանդարյան, Ա. Մարգարյան), «Արծիվ-1» մահապարտների կազմում «Թալիշ» կամավորական (հրամանատար՝ Վ. Օհանյան) ջոկատները: Ջոկատներն առանձին կամ դժի ստորաբաժանումների կազմում մասնակցել են Մարտակերտի, Ասկերանի, Քարվաճարի (Քելքաջար) (Օմարի լեռնանցք) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Զագիլիկից ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարզատորվել է Ս. Անտոնյանը[32]:

Զագիլիկի կամավորական ջոկատներ (ԼՂՀ Մարտակերտի շրջան)

Զագիլիկի կամավորական ջոկատները կազմավորվել են 1988-ին Ա. Հարությունյանի և Ս. Պետրոսյանի հրամանատարությամբ: Ջոկատներն առանձին կամ Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումների կազմում մասնակցել են Մարտակերտի, Ասկերանի, Քարվաճարի (Քելքաջար) (Օմարի լեռնանցք) շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Զագիլիկից ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով հետմահու պարզատորվել է Ս. Անտոնյանը[33]:

Գետավանի կամավորական ջոկատներ (ԼՂՀ Մարտակերտի շրջան)

1989-ին Գետավանում կազմավորվել է կամավորական 2 ջոկատ (հրամանատարներ՝ Ս. Մարգարյան, Վ. Թամրաջան), որոնք առանձին, իսկ 1992-ից Մարտակերտի պաշտպանական շրջանի կազմում մասնակցել են ԼՂՀ Մարտակերտի (Խմերեթ, Քարահոնչ (Քերապենի), Աղդաքան, Մրխավենդ, Մարաղա) ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: 1992-ի հուլիսին գյուղը գրավվել և ավերվել է, ազատագրվել 1993-ի փետրվարի 15-ին[34]:

Այսպիսով՝ մի շարք ինքնապաշտանական ջոկատների օրինակով փորձեցինք ցույց տալ ԼՂԻՄ գոյության վերջին տարիներին՝ 1988-1991թթ., իսկ ազգարնակչության գինված ինքնապաշտպանության կազմակերպման ընթացքը, ինչն, այնուհետև, վերածեց կանոնավոր ստորաբաժանումների և ժամանակակից բանակի կազմավորման գործընթացի:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հարությունյան Ս. Ա. Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», հմ. 1, 2000, էջ 79:
2. Հարությունյան Ս.Ա., Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Եր., 2000, էջ 27:
3. Նույն տեղում, էջ 27-28:
4. Նույն տեղում, էջ 28-29:
5. Բալյայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007թթ.), Ստեփ., 2012, էջ 298: Մելիկ-Ռախնազարօվ Ա., Խաղորնակ Կարաճախ: ֆակտы против лжи, М., 2009, стр. 577-590.
6. Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 29-30:
7. Հարությունյան Ս., Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության գորգահեռներում, հոդվածների ժողովածու, Ստեփ., 2009, էջ 71: Տես նաև «Հայ զինվոր» ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ, թիվ 19, 1999թ.:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԻՐԱՏՈՒ 2016

8. Ուլուբարյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 335:
9. Բալայան Վ.Ռ., Բալայան Ռ.Ա., Հարությունյան Մ.Ա., Անկախության նվիրյալները, Արդ՛ ուսանողները Արցախյան ազգային-ազատագրական պայքարի տարիներին, Եր., 2009, էջ 11:
10. Հարությունյան Մ., Ազգային ազատագրական նորոյա պայքարում Արցախի մայր բուիի դերի մասին, «Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու», գիտական հոդվածների պարբերական ժողովածու, Եր., 2015, էջ 100:
11. Հարությունյան Մ., «Ցեղակրօն», Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ, էջ 635:
12. Հարությունյան Մ., Ասկերան. հերոսության հասցեներ, Ասկերան, 2005, էջ 34:
13. Հասրային Մ., Անմահ պատահն, Ստեփ., 2013, 152էջ:
14. Հարությունյան Մ., Արցախի մայր բուիի ուսանողությունը հայրենիքի պաշտպանության դիրքերում, «Խաղաղ Կովկասը՝ տարածաշրջանի զարգացման գործոն»։ ԼՂՀ և ՀՀ անկախությանը նվիրված միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2011, էջ 243:
15. Հարությունյան Մ., Ասկերան. հերոսության հասցեներ, էջ 8-9:
16. Բալասանյան Վ., Ասկերան, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., էջ 74-75:
17. Ղահրամանյան Է., Ավետարանոց, նոյն տեղում, էջ 83:
18. Գալստյան Վ., Բերքաձոր, նոյն տեղում, էջ 119:
19. Սարգսյան Գ., Ավանյան Ի., Մկրտչյան Յու., Դաշուշեն, նոյն տեղում, էջ 177:
20. Մանգասարյան Գ., Խաչատրյան Է., Խնաբադ, նոյն տեղում, էջ 264:
21. Աղասարյան Գ., Խնձրիստան գյուղի պատմությունը, Ստեփիանակերտ, 2002, էջ 41:
22. «Խնձրիստան», Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ., էջ 269-270:
23. «Լուսաձոր», նոյն տեղում, էջ 263:
24. Սարգսյան Գ., «Բերդաշեն», նոյն տեղում, էջ 118:
25. Գասպարյան Մ., «Գիշի», նոյն տեղում, էջ 161:
26. Հարությունյան Օ, «Թաղավարդ», նոյն տեղում, էջ 208:
27. Աղաջանյան Ա., Կամո Սերգեյի Բալասանյան (1965-1994թթ.), hydrarcaxuhi.blogspot.am/2013_02_01_archive.html 21.12.2015.
28. «Սպիտակաշեն» Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ., Եր., 2004, էջ 600:
29. Մանուկյան Հ., «Հաթերք», Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ., հանրագիտարան մեկ հատորով, էջ 311:
30. «Ծաղկաշեն», Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994թթ. հանրագիտարան մեկ հատորով, էջ 273-274:
31. Մանուկյան Հ., «Թբղլու», նոյն տեղում, էջ 209:
32. «Թալիշ», նոյն տեղում, էջ 206-207:
33. Մանուկյան Հ., «Չաղլիկ», նոյն տեղում, էջ 194:
34. Սարգսյան Ն., «Գետավան», նոյն տեղում, էջ 160:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԽՍՀՄ-Խորհրդային Սոցալիստական Հանապետությունների Միություն
ԼՂԻՄ-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ՆԳՆ-Ներքին գործերի նախարարություն
ՄՀԱԶ- Միլիցիայի հաստոկ նշանակության ջոկատ (ՕՄՕՆ)
ՊԱԿ-Պետական անվտանգության կոմիտե
ԿՄԻ-Կիրովականի մանկավարժական ինստիտուտ
ԼՂՀ-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԻՊՈՒ-Ինքնապաշտպանության ուժեր
ՊՃ-Պաշտպանական շրջան
ՊԲ-Պաշտպանության բանակ
ՀՀ-Հայաստանի Հանրապետություն
«ՄՄ-21»-Մարտական մեքենա-21-«Գրադ»
ԽՍՀ-Խորհրդային սոցալիստական հանրապետություն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ԼՂԻՄ գոյության վերջին տարիներին հայ ազգաբնակչության գինված
ինքնապաշտպանության կազմակերպման մասին
Հովհակ Ավանեսով

Հոդվածում փորձ է կատարվել հակիրճ ներկայացնելու Արցախի համար կարևոր
մի գործընթաց՝ համեմատաբար կարճ ժամանակաշրջանում տասնյակ կամավորա-
կան ջոկատների կազմակորումը, որոնք իրականացնում էին հայրենի սահմանների
պաշտպանությունը: Հետագայում ջոկատների հիմքի վրա կազմավորվեցին պաշտ-
պանական շրջանները, որոնք էլ հիմք հանդիսացան կանոնավոր բանակի ստեղծման
համար: Այդ գործընթացը զուգորդվում էր պատերազմական գործողությունների հետ:

РЕЗЮМЕ

О самообороне армянского населения в последние годы существования Нагорно-
Карабахской Автономной Области
Овик Аванесов

Ключевые слова: военная операция, Арцах, национально-освободительная борьба,
военное строительство, Степанакертский педагогический институт, добровольческий
отряд, Карвачар (Кельбаджар), Омарский перевал, самооборона, безопасность, НКАО

В статье кратко описывается важный процесс для Арцаха - формирование десятка
добровольческих формирований, осуществляющих защиту границ в течение относительно
короткого периода. На основе оборонных единиц были сформированы оборонные регионы,
ставшие основой для создания регулярной армии. Этот процесс происходит параллельно с
военными операциями.

SUMMARY

The self-defense of the Armenian population during the last years of the Nagorno-Karabakh Autonomous Region existence
Hovik Avanesov

Keywords: military operation, Artsakh, national-liberation struggle, military construction, Stepanakert Pedagogical Institute, volunteer unit, Karvachar (Kelbajar), Omar Pass, self-defense, security, NKAO.

The article briefly introduces an important process for Artsakh - the formation of a dozen of volunteer units in a relatively short period, that carry out the protection of borders. On the basis of defense units defense regions were formed, which became the basis for the creation of a regular army. This process was going on in parallel with military operations.